ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2026թ. թիվ 726-Ա

Շ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ Մ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցքի Մ.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդի հետ պայմանագրի կնքման մասին 2026 թվականի հոկտեմբերի 2-ի արձանագրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Շուշանիկ Սուրիկի Խաչատրյանին 2026 թվականի հոկտեմբերի 8-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցքի Մ.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

2. Շ.Խաչատրյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-10-06 18:15:54 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 6
ք.Վանաձոր